

Հաշոռութեան եւ բարեխաւս առ միածին որդին Քրիստոս, զի իշխանութենէ, որ տուեալ է քեզ, արձակեա զիս ի կապահաց մեղաց իմոց, աղաչեմ զքեզ:

Այս ամբողջ հատուածի մէջ բովանդակութենէն աւելի, թերեւս գրութեան լեզուն հետաքրքրելի լինի բանասիրաց համար, որ այնքան խօսակցութեան լեզուին մօտ է:

## Գ.

Պարսկահնդկաստանի առաջնորդ Թագէոս Արքեպիսկոպոսը, որ երկար տարիներ պաշտօնավարեր է Ն. Զուլայում եւ այնտեղ էլ կնքել է իր մահկանացուն, ի մի է ամփոփել ներսէս Աշտարակեցու հետ ունեցած իր ամբողջ գրագրութիւնը եւ կազմել մի մեծադիր (սովորական գրելու թղթի մէծութեան մօտաւորապէս 38 ս. երկարութեամբ) հաստ տետր: Թագէոս վարդապետը (յետոյ եպիսկոպոս) Աշտարակից ու աշխատակիցներից եւ կողմնակիցներիցն էր՝ ընդդէմ Յովհաննէս Կարրեցու եւ իր կուսակիցների: Այդ ժողովածուն հետաքրքրական է ներսէսի շրջանի պատմութեան համար, եւ միակն է իրը հաւաքածու՝ նոյն շրջանի նիւթերի: Արժէր, որ այդ ձեռագիրն երթար էջմիածնի պետական մատենադարանի դիւնական բաժինը:

Իբր վերջարան պատշաճ կը համարիմ յիշել, որ Ն. Զուլայի մատենադարանի մէջ Հարաւային Պարսկաստանի հայ գիւղերում յորուած գրչագրերը հաւաքելու գործում գնահատելի ծառայութիւն մատուցած է Հանգուցեալ Եղնիկ Ծ. վարդապետը, որ այնքան վատօրէն սպանուեց Համադանում 1922 թուի ապրիլի 30ին:

Ասել թէ պարսկահայութեան մօտ եղած բոլոր գրչագրերն են ի մի հաւաքուած, սխալ կը լինէր, քանի որ դեռ շատ տեղերում մասնաւոր ընտանիքների մօտ պահուած կը մնան իբր տոհմական լիշտակներ, համարեա՛ իբր սրբութիւն՝ դեռ շա՞տ գրչագրեր, որոց մէջ Յայսմաւուքներ՝ ընտիր յիշատակարաններով: Ի դէպ է յիշել, որ Արագի (Սուլթանաբաղի) շրջանի մէկ հայ դիւղում դայութիւն ունի մի Յայսմաւուք, որի յիշատակարանը ժամանակակիցի գրչով եւ բերնով նկարագրում է Շահաբասեան դադթը շատ լաւ գոյներով, հակառակ այն ողբաձեւ նկարագրութեան, որ յետոյ տալիս է Առա-

քել Դավրիժեցին իր պատմութեան մէջ՝ լրոյ առնելով իր տեղեկութիւնները: Շատ հետաքրքրական է այլ գրչագրի լիշտակարանը տպագրուած տեսնել:

ԱՐՄԵՆ Ժ. Վ. ԱՀՃԵԱՆ



## ԴԻՑԱՐԱՆԱԿԱՆ

## ՄԻՀԻԼ ՀԱՅՈՅ ՄԻՀ

(Շարուռակութիւն:)

## Գ.

## ՄԻՀԻԼ ՀԱՅՈՅ ԿԵՆԳՐԱԿԱՆ

## 1.

Հայ միհրապաշտութեան կենդրոնների հարցը նոր է զրուած հրապարակի վրայ: Այս մասին առաջին որոշ խօսքն ասողը եղել է Ստեփան Կանայեանցը, որին է պատկանում նաև, ինչպէս ասել ենք, Մհեր-Միհր կարեւոր զուգագրութեան միտքը:

Կանայեանցի կարծիքով հայ միհրապաշտութեան կենդրոնը Հայաստանի հարաւային նահանգներից մէկն էր — Վասպուրականը:

«Վասպուրականը, — գրում է նա 1907 թուականին, — միհրականութեան կենդրոն է երեւում: Միայն այստեղ են երեւում Միհրով բարդուած անուններ՝ Մեհրուժան, Մեհենդակ, Մեհեառ: Կանգուար — Ագուաքարը, Փաղատը, Արամաղդայ գեւաց տունը, կրակ քրյուը եւ աղբիւր եղբայրը Բութ տեղում, որ յիշեցնում է մեղ Բութկայ աքաղաղը, երբեմն արշալոյսն աւետող, եւ Ս. Տիկինը, Հոգեաց Տիրամօր վանքը եւ Դարբնաց քարը Միհրին նուիրական վայրեր են եղել. իսկ մէկը Մհեր-Միհրն էլ այն կողմէրն է փակուած: Ումանց ասելով Վանայ միւս անունը՝ Շամիրամակերտ = Շահմիհր-կերտ (Ստեփան Պարսանեան, Պատմութիւն Հայոց, 11 էջ 52, Թիֆլիս 1890), Զոջանց տան պատմականը, 49—59:

Երեք տարի յետոյ այս բանասէրը իւր մի այլ գրուածքի մէջ կրկնում է նոյն միտքը հետեւեալ հատուածում:

«Մհերի դուռ» ճիշտ պարսկերէն Տեր-ի-  
Միհր-ն է, որ նշանակում է դուռն Միհերի :  
Դեր-ի-Միհր կոչւում են մեծ զոհաբանները  
(SPIEGEL, "Eranische Alterthumskunde", III,  
եւ որովհետեւ Մհերի դուռը, ինչպէս եւ  
Ակոփու սարը, ուր փակուել է Մհեր-Միհրը,  
Վանայ մօտ է (Գ. Սրուանձտեան, «Մանա-  
նայ», Գ. էջ 58), ուստի մի նոր ապացոյց  
եւս աւելանում է մեր այն գիտողութեան  
վրայ, որ Վասպուրականը հնում միհրա-  
կանութեան կենդրոն է եղել», Սասմայ ծոեր  
վէպի երեք փոփոխակ, Յառաջարան, էջ 1. :

Կանայեանցի՝ ասածը Վասպուրականի  
մասին ճիշտ է, բայց կարիք ունի մի քանի  
լրացումների :

Նազ՝ մեղ թւում է, որ աւելի ուղիղ կը  
լինի, եթէ մենք տարբերութիւն դնենք մի-  
հրապաշտութեան ու միհրականութեան մի-  
ջև։ Միհրապաշտութիւնը Միհերի պաշտա-  
մունքի նախնական, ժողովրդականացած,  
մատչելի ձեւն է. միհրապաշտութիւն կայ  
այնուղ, որտեղ Միհրը պաշտում է իրեւ  
բարի գիւցաղն եւ կամ իրեւ լոյսի, արեւի  
ու կրակի աստուած։ Այլ բան է միհրա-  
կանութիւնը։ Այս հոսանքը ուամկամիտներին  
մատչելի չէ, այլ կրօնա-փիլիսոփայական  
հայեցողութեան ընդունակ մարդկանց  
զբաղմունք՝ զուգորդուած նորամեւ նուի-  
րապետութեամբ, տողորուած աւելի խիստ  
պահանջներով ու պարուրուած մշուշածէն  
խորհրդարարքներով։ Միհրապաշտութիւնը  
մի պարզ կրօն է, միհրականութիւն՝ մի  
բարդ վարդապետութիւն։ Միհրապաշտու-  
թիւնը Միհերի պաշտամունքի սկզբնական  
աստիճանն է, միհրականութիւնը՝ նրա վեր-  
ջին ձեւը։ Միհրապաշտութիւնը իւր մատ-  
չելութեամբ աւելի նման է ժողովրդական,  
«ձկնորսական» քրիստոնէութեանն, այն ինչ  
միհրականութիւնը հնագարի մասնակա-  
նութիւնն է։

Այս պատճառաբանութեամբ կարծում  
ենք, որ Հայաստանի մասին խօսելիս աւելի  
յարմար է գործածել միհրապաշտութիւն,  
քան թէ միհրականութիւն բառը, որովհե-  
տեւ միհրապաշտութեան առացոյցներ ու-  
նենք, իսկ միհրականութեան՝ ոչ։ Անհնա-  
րին չէ, որ Հայաստանում էլ երեւացած լի-  
նի նաեւ միհրականութիւնը, սակայն այս  
մասին խօսելու համար Հարկաւոր են նոր ու  
հաստատուն տուեալներ :

Այնուհետեւ, ճիշտ է անշուշտ այն միտ-  
քը, թէ Վասպուրականը եղել է միհրապաշ-  
տութեան կենդրոն, սակայն սխալուած  
կը լինենք, եթէ կարծենք, թէ միայն Վաս-  
պուրական է հանդէս եկել իրեւ այսպիսին։  
Այն փաստերի կողքին, որոնցով ապացուց-  
ում է եւ ապացուցում է իրաւամբ, թէ  
Վասպուրականը ներկայանում է իրեւ մի-  
հրապաշտութեան կենդրոն, կարելի է շա-  
րել նման այլ փաստեր էլ, որոնք ապացու-  
ցեն, թէ նոյնը կարելի է ասել Հայաստանի  
մի քանի ուրիշ նահանգների վերաբերմամբ  
էլ։ Մասնաւորապէս թիւրիմացութիւն պէտք  
է համարել Կանայեանցի այն պնդումը, թէ  
միայն Վասպուրականում են երեւում Միհր-  
ով բարդուած անուններ։ Այն ինչ իրակա-  
նում Միհր անուան ծաւալման, ուրեմն եւ  
Միհերի պաշտամունքի տարածման սահման-  
ները չատ ու չատ ընդարձակ երկրամաս են  
ընդգրկում, քան համեմատաբար փոքրիկ  
Վասպուրականն է։

Եթէ մենք Վասպուրականը հայ միհրա-  
պաշտութեան կենդրոն ենք համարում,  
որովհետեւ պատմութեան ընթացքում այն-  
տեղ գտնում ենք

1. Մեհրուժան Արծրունի, Դ. դար,
  2. Մեր-Շապուհ Արծրունի, Դ. դար,
  3. Մեհենդակ Ռշտունի, Դ. դար,
  4. Մերուժան Արծրունի, Եղբայր Աղա-  
նայ, Ե. դար,
  5. Միհր-Շապուհ Արծրունի, Ե. դար,
  6. Մեհրուժան Արծրունի, Լ. դար,
  7. Մեհրուժան Արծրունի, Թ. դար,
  8. Մեհրուժան Արծրունի, Ժ. դար ու
  9. Մհերի դուռ մեր օրերում, —
- ապա նոյն իրաւունքից չի կարելի զրկել  
նաեւ հետեւեալ երկիրները.

Սիւթիք,

որտեղ գտնում ենք

1. Ամիր-Ներսէհ, Վասակ Սիւնու որդի,  
Ե. դար,
2. Միհր-Արտաշիր, Սիւնեաց տէր, Զ.  
դար,
3. Միհրան Թուրքայ որդի, Սիւնեաց ա-  
զատ, Ժ. դար,
4. Մահեւան, Սիւնեաց ազատ, ԺԱ. դար,
5. Մահեւան, Սիւնեաց ազատ, ԺԲ. դար,
6. Մահեւան, Սիւնեաց ազատ, ԺԳ. դար,

7. Մահեւան, Սիւնեաց ազատ, ժԳ. դար,  
ու  
8. Մահեւանեանք, Սիւնեաց ազատա-  
տոհմ, ժԳ. դար,

Աղուանից աշխարհ,  
որտեղ եղել են

1. Միրհաւան թագաւոր, հաւանօրէն Դ.  
դար,  
2. Միրհաւրիկ հազարապետ,  
3. Միրհ տոհմապետ, Է. դար,  
4. Միրհեան կամ Միրհական, Է. դարից,  
5. Միրհաւան քաղաք Է. դարից,  
6. Միրհ եպիսկոպոս, Է. դար,  
7. Զար-Միրհ իշխան, Է. դար ու  
8. Ներս-Միրհ վանք (Զրվշտիկ), որ  
Աղուանից պատմագիրը յիշում է Դ.  
դարից մինչեւ Բ. դար եւ

Տարօն-Սասուն,  
որտեղի հետքերն են

1. Մեր-Շապուհ եպիսկոպոս Մամիկո-  
նէից, Զ. դարի սկիզբներին,  
2. Մեր-Շապուհ եպոս. Մամիկոնէից, Զ.  
դարի կէսերին,  
3. Մէհեր Մամիկոնեան, Տարօնի իշխան,  
Ժ. դարից առաջ,  
4. Մէհերեաններ Մշում Ժ. դ. դար,  
5. Մէհերի տոհմ Սասուն, Ժ. դ. ու ի.  
դար,  
6. Մէհերի տապահն = Սասուն ու վերջա-  
պէս  
7. Մէհերի բերդ Սասուն:

Պարզ է, որ Վասպուրականի կողքին  
պէտք է աւելացնել արեւմուտքից Տարօն-  
Սասունն, իսկ հիւսիս-արեւելքից՝ Սիւնիքն  
ու Աղուանից աշխարհ:

Այսքանը եղրակացնում ենք անունների  
ուսումնասիրութիւնից: Սակայն, բացի այս  
անուններից, կան պատմական այլ տեղե-  
կութիւններ էլ, որոնց հիման վրայ պէտք  
է միհրապաշտութեան կենդրոնների թիւը  
մէկով էլ աւելացնենք: Այս մէկ ու թերեւս  
հնագոյն կենդրոնը Բարձր Հայքն է: Սրա  
դաւաններից մէկում — Դարանաղեաց գառ-  
ւառում էր գտնւում Թորդան-Միթրոդան  
գիւղը, որի մասին գլուխ է նոյն ինքը Կա-  
նայեանցը՝ «Սպիտակափառ դիցն Բարձր-  
մինայ» մէհեանը գտնւում էր . . . Թոր-

դան գիւղում, որի հնագոյն անունն է  
Միթրոդան, որով եթէ Բարձրամինան ու  
Միհրը նոյնացած չհամարենք, պէտք է յա-  
մենայն դէպս ընդունենք, որ Թորդանում  
եւս Միհրի պաշտամունք է եղել», Սասմայ  
ծուեր վէպի երեք փոփոխակ, Յառաջարան, էջ  
իկ: Բարձր Հայքի մի ուրիշ գաւառում —  
Դերջանի Բազայառիմ գիւղում, այս արդէն  
հաստատապէս գիտենք, կար Միհրին նուի-  
րուած նշանաւոր մեհեան, որ հոչակուած  
էր ամբողջ Հայաստանում:

Այսպիսով հայ միհրապաշտութեան  
կենդրոններ պիտի ընդունել

1. Բարձր Հայքը՝ հիւսիս-արեւմուտքում,  
2. Վասպուրականն ու  
3. Տարօն-Սասունը՝ հարաւում,  
4. Սիւնիքն ու  
5. Աղուանից աշխարհն՝ արեւելքում:

Հայ միհրապաշտութեան կենդրոնների  
նշանակութիւնը սխալ չհասկանալու համար  
անհրաժեշտ է այս լրացումներից յետոյ մի  
վերապահութիւն էլ անել:

Յիշեալ հինգ կենդրոնները պէտք է բա-  
ժանել երկու կարգի: առաջին՝ Բարձր Հայք  
եւ երկրորդ՝ Վասպուրական, Տարօն-Սա-  
սուն, Սիւնիք ու Աղուանից աշխարհ:

Սրանցից Բարձր Հայքում ոչ միայն եղել  
է Միհրի պաշտամունք, այլ եւ այնտեղ է  
ընուած եղել Միհրի ամենանշանաւոր մե-  
հեանը — հայ միհրապաշտութեան սրբա-  
վայրը: Սրբավայրի հմայք ու անունը կա-  
րող է նրա սահմաններից շատ ու շատ հեռու  
տարածուել: Մշու սուլթան Սուլրը Կարա-  
պետին հաւատում էին ոչ միայն մշեցի  
հայերն, այլ եւ բոլոր Հայ-քրիստոնեաններն  
ի սփիւռս աշխարհի, իսկ Երուսաղէմի փա-  
փագով այրւում էին ոչ միայն հարեւան եր-  
կիրների հաւատացեալներն, այլ եւ կաթո-  
ողով լոյսի ու մահեսութեան յարգն իմացող  
բոլոր անձինք, որոնք այնտեղ էին ձգտում  
երկրագնդի ամէն ծայրերից: Նմանապէս էլ  
թէեւ Բարձր Հայքում էր գտնւում հայ մի-  
հրապաշտութեան գլխաւոր սրբավայրը,  
բայց այս չէր նշանակում, թէ Հայաստանի  
այլ նահանգներում պակաս թափ ու հմայք  
ունէր Միհրի պաշտամունքը: Միհրապաշ-  
տութիւնը համատարած էր հին Հայաստա-  
նում: Այս է ուղիղ ըմբռնումը: Սակայն  
սրան պէտք է աւելացնել, որ միհրապաշտու-  
թիւնը հաւատարապէս դիմացկուն չէր Հայ-

աստանի բոլոր ծայրելում։ Արեւմտեան Հայաստանում, որտեղ հենց գտնուում էր Բարձր Հայքը միհրապաշտութեան գլխաւոր սրբալայրով հանդերձ, քրիստոնէութիւնն աւելի վաղ խարիլեց միհրապաշտութեան հիմքերը, քան Հայաստանի ուրիշ մասերում։ Սրա հետեւանքով էլ Միհր անուան դէպքեր փոփոխակներ չենք դանում Բարձր Հայքում։ Այստեղ միհրապաշտութիւնն աւելի վաղ է անհետացել։

Այլ է եղել դրութիւնը երկրորդ կարգի կենդրոներում։ Սրանք միհրապաշտութեան կենդրոններ են ոչ այն իմաստով, որ միայն սրանք են եղել միհրապաշտութեան որորանները կամ այստեղ միհրապաշտութիւնը հնուց անտի աւելի վառ ու բորբոք վիճակ է ունեցել, քան Հայաստանի այլ մասերում, այլ այն իմաստով, որ միհրապաշտութիւնն այստեղ — Հայաստանի հարաւում ու արեւելքում — աւելի երկար է գիրապել քրիստոնէութեանը եւ աւելի շատ է յարատեւել, քան այլ նահանգներում։ Սրա հետեւանքով Աղուանից աշխարհում Միհր անուան յիշատակութիւն գտնում ենք մինչեւ Ժ. դար, Վասպուրականում մինչեւ Ժ. դար, Տարօնում մինչեւ Ժ. դար, Սիւնիքում մինչեւ Ժ. դար, իսկ Մհերի հետկապուած տեղանունները պահւում են մինչեւ Ժ. դար։

Հայաստանի երկուութեան ցուցանիշներից մէկն է այս։ Երկրը բաժանուել էր երկու ոլորտի, որոնցից իւրաքանչիւրը տարբերում էր միւսից իւր աշխարհագրական դիրքով, անտեսական վիճակով, հողերանութեամբ ու ընդհանուր դիմուղլումով։ Կար երկու Հայաստան Բիւզանդիային հակուած ու Բիւզանդիայից նուաճուած Հայաստան ու Պարսկաստանին միտուած ու Պարսկաստանին ենթակայ Հայաստան։ Հոռմ-Բիւզանդեան ու քրիստոնէութիւնն արշաւում էին արեւմուտքից, Իրան-Պարսկաստանն ու միհրապաշտութիւնը դիմագրում էին արեւելքից։ Արեւմուտքը վաղ է նուաճուած, ուստի եւ այստեղ չեն յարաւեւում միհրապաշտութեան հետքերն, այն ինչ հարաւն ու արեւելքը — կատաղի արեւմտատեացներ ու ջերմեանդ արեւապաշտեար ու արեւելամոններ — յամաօրէն ու երկար մարտնչում են հին դիրքերի համար։ Այս պատճառով էլ այստեղ այնքան

ուշ են չքանուում ասպարէզից միհրապաշտութեան հետքերը։ Միհր-Արեւը նախ պարտում է արեւմուտքում եւ յետոյ, մայր մըսնում . . . արեւելքում . . .

Այս ակնոցով նայելիս հասկանալի է դառնուում, ի միջի այլոց, նաևւ այն, թէ ինչու քրիստոնեայ Հայաստանում իրեւ ընդդիմագրութեան պարագլուխ յաճախակի հանդէս էին գալիս յատկապէս Վասպուրականի ու Սիւնեաց իշխանները իրենց անմիջական հարեւանների հետ միասին։

Միհր պարտագրում էր :

(Շարումակալի.) ԹԱՅԻՆՈՍ ԸԼԻԴԱՅԻԳԵԱՆ  
ԵՐԵՎԱՆ:

## ՊԱՑՄԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏԻԿԱՆՆԵՐՈՒ ՓԱՄԵ-  
ՆԱԿԱՐՈՒԹԻՒՆՆ ԸՄԵԶԻՆ ԸԲԲԸՆԵԱՆՑ  
ՕՐՈՎ\*

Հաղարեան իւր “Armenien unter der arabischen Herrschaft”, Marburg 1903, 40—43 դործին մէջ կու տայ բաւական ընդպարձակ ակնարկ մը Հայաստանի խալֆայական ոստիկաններու մասին։ Այս աղիւսակը կաղմելու համար նա կը գործածէ Բելազորիի, Եակուրիի եւ Տարարիի պատմական գրութիւնները։ Սակայն նա միայն այս երեք հեղինակներէն օդտուելով չի կրնար մէն մի ոս-

\* Փամլէր “Хронология наместников Армении при первых Аббасидов, импресариоп Ֆրանքակած է այս ուսումնափրութիւնն ի Յանիկ Կոլլեգիա Վոստոկովեօն որի Ազգային Մատուցութիւն կը թարգմաննեն, միայն թէ ընթերցողներու գիրութեան համար չեղինակի կողմանէ միայն արամերէն լեզուաւ յառաջ ընթերց տեղիները գորս ծգելով անոնց հայերէն թարգմանութիւնը կու տանը, ինչպէս եւ արաբական գրով յառաջերերուած անուններուն ընդհանրապէս միայն հայերէն տառաղարձութիւնը։ Բաց աստի թէեւ չեղինակը շեւոնդ պատմագիրն ուստ Պատկանեամի ուսւերէն թարգմանութիւնն իր գործածէ, սակայն մննը յառաջերերութիւններն ուղղակի հայ ընազիր վրայէն՝ ըստ Եղիշեանի Տատարակութեան (Պետքըրուրզ 1887) կընէնք։ Թարգմանութիւնս կատարած մնը չեղինակի մասնաւոր թոյսուութեամբ (17 Յունուար 1928 թուակիթ նամակով)։